

373

S-70

MAR 20 1933

Հ. Ս. Խ. Հ. ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՍԵԿՏՈՐ

138

ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ

(ՔԱՂԱՔԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԻ)


Ծ Ր Ա Ք Ր Ե Ր

V — X-րդ ԽՈՒՄԲ

ՊՐԱԿ V

1. ՀԱՅՈՑ ԼԵՋՈՒ
2. ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
3. ՌՈՒՍԱՅ ԼԵՋՈՒ
4. ՌՈՒՍԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
5. ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵՋՈՒ
6. ԳԵՐՄԱՆԵՐԵՆ ԼԵՋՈՒ

373
Մ-73 48



1933

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

01 JUL 2013

51. 443

373
5-73

Մրագրերը մեակված են Լուսժողովուրդի
ժրագրա-մեքողական գիտա-հետազոտական
կայանի լեզվի լեզվ գրուկանություն սեկտորի
կողմից:

Հ Ա Յ Ո Ց Լ Ե Չ Ո Ւ

Բ Ա Յ Ա Տ Ր Ա Կ Ա Ն

Միջնակարգ դպրոցի լեզվի ծրագիրը տարրական դպրոցի ծրագրի ան-
միջական շարունակությունն է կազմում: 5-րդ խմբից սկսած՝ լեզվի ուսուց-
ման տեման ավելի ուժեղ պիտի լինի. իսկ պահանջներն — ավելի խիստ:
5-րդ խմբից սկսած՝ բանավոր և գրավոր խոսքի ուսուցումը գրված է միա-
սին այն պատճառով, վոր այստեղ միևնույն նյութը կարող է ծառայել թե
բանավոր և թե գրավոր խոսքի ուսուցման միջոց: Միջնակարգ դպրոցի
խմբերում գրավորները շատ ավելի ինքնուրույն պիտի կատարվեն, քան
ցածր խմբերում. այստեղ պետք է առանձին ուղղորդություն նվիրել մաքուր
և բարբառային ձևերից զերծ գրական լեզվով ստեղծագործական շարադրու-
թյուններին և բաղաձայնների ուղղագրություն: 5-րդ խմբում անցնում են
ձևաբանությունը, 6-րդ խմբում՝ շարահյուսությունը, 7-րդ խմբում՝ վոճա-
բանությունը, այլև ամփոփում են վողջ քերականության դասընթացը: Այս
վերջին խմբում համառ ու տևական աշխատանքի միջոցով քերականական
ամբողջ գիտությունը վերջնականապես պետք է չուրացվի, պետք է մեծ
չափով զարգանան քերականագիտական ունակությունները՝ ձիշտ խնդրա-
նություն, կետադրություն, ընդարձակ և բարդ նախադասություններ կազ-
մել և ոգտագործել, հորիմների գործածություն, ժամանակի ճիշտ կիրառում,
քերականության հետ կապված ուղղագրություն, շարադրական գիտության
կիրառություն և այլն: 7-րդ խմբում սկսվում են լեզվի տեսության տար-
րերը և ավարտվում 8-րդ խմբում: 8-րդ խմբից գրականության պատմու-
թյան կապակցությամբ հաղորդվում են հայոց լեզվի պատմության տար-
րական գիտելիքներ՝ գրաբար լեզուն կապելով գրաբարյան շրջանի գրակա-
նության ծանոթության հետ, միջին հազրենը՝ միջնադարյան տարերգու-
թյան և բուրժուա-դեմոկրատական հայերենը՝ հայոց նոր գրականության
պատմության հետ: Հայերենի առանձին լեզուների (գրաբար, միջին հազ-
րեն, աշխարհաբար) նմուշների ոգնություն պետք է ցույց տալ նրանց վո-
րական տարբերությունները: 9-րդ խմբում բարբառներով գրված յերկե-
րի կապակցությամբ պետք է ծանոթացնել հայերենի բարբառագիտության,
ամենատարրական ձևով, և ապա լեզվի պատմությունն ավարտել լեզվաշի-
նարարական նոր խնդիրների մասին ծանոթություն տալով: Լեզվի ուսուց-
ման գործը չպետք է աչքաթող անել մինչև միջնակարգ դպրոցի վերջին
խումբը ներառյալ: Գրականության պատմության ավանդումը նախատեսում
է թե բանավոր, թե գրավոր խոսքի գործադրություն, ուստի դասավանդ-
ման ընթացքում միշտ պետք է պահանջկոտ լինել լեզվի նկատմամբ և
աչալուրջ հետեւել լեզվի գիտության պահաս մնացած կողմերը լրացնելուն:

837
ԿԵՑ
38

Պատ. խմբագիր՝ Ա. Ղաբիրյան
Տեխ. խմբագիր՝ Գ. Ջենյան
Սրբադրիչ՝ Վ. Տերոյան

Այս ծրագրի սխտեմատիկ կիրառման արդյունքը պետք է լինի այն, վոր տասնամյակն ավարտողը կատարելապես տիրապետի հայերենին՝ անսխալ գրի և խոսի, գիտենա հայոց լեզվի քերականութունը, տարրական կերպով լեզվի պատմութունը և տարրական գիտելիքներ ձեռք բերի լեզվի տեսութունից:

5-րդ ԽՈՒՄԲ

1. Բանավոր լեզվի գրավոր խոսքի զարգացումը. — Հոգվածի հասարակագիտական և գրական-գեղարվեստական բանավոր վերլուծութուն. պարզ կոնսպեկտի սզնությամբ գեղուցում. տեղեկատու գեղուցում. գեղարվեստական արտասանութուն չերեկույթներին և հանգեսներին:

Հոգվածի շարադրական վերլուծութուն. պարզ պլան. կոնսպեկտ կամ համառոտադրութուն. ցիտատ, քաղվածք, պլակատ նախորոք մշակված պլանի սզնությամբ պարզ թեմայի մասին շարադրութուն. պատի թերթի համար հոդված. մշակված պլանով ազատ շարադրութուն. ինքնակենսագրութուն, պարզ բնութագրութուն. գործնական գրութուններ (նամակ, դիմում, տեղեկանք, լրագորագիր, արձանագրութուն, պայմանագիր և այլն):

2. Ընթերցանություն, գրելով լեզվի լրագրով աշխատանք. — Գրքի արտաքինի հետ ծանոթութուն. (անուն, հեղինակ, հրատարակութուն, հրատարակչութուն, տեղ, տարեթիվ, տիրաժ, առաջաբան, ցանկ, բաժին, գլուխ և այլն): Ծանոթութուն դարձողական գրադարանի կոնսնագրությանը, գրադարանից գիրք ստանալու կարգին, գրացուցակի հիմնական բաժիններին. կարողանա ոգավել բացատրական բառարաններով և գրացուցակով:

Ծանոթութուն լրագրի բաժիններին, վորոշ թեմայի շուրջը լրագրային նյութեր հավաքել և դասավորել:

Սահուն և գիտակցական ընթերցանութուն. լուս ընթերցանութուն կապված գրքով աշխատելու հետ (պլան և կոնսպեկտ կազմել, ցիտատ և այլն): Բարձրաձայն և բացատրական ընթերցանութուն աղումըներում. խրճիթ-ընթերցարաններում և այլն: Տնային ընթերցանութուն ուսուցչի ցուցմունքով:

Քերականություն. — Գաղափար խոսքի մասերի մասին. գոյական անուն, նրա տեսակները, հայերենի յոթ հորիզները (ուղ., սեռ., սր., հայց., բացառ., գործ., ներգ.):

Ուղիղ խնդիր և հայցական հորով (գործողության առարկայի գաղափարի կապակցությամբ). հորովման ի, ու, ան, յան, վա, ոջ, որ, ց ձևերը. տարրական գաղափար գրաբարից վերցված շատ գործածական հորովական ձևերի մասին (սիրո, գստեր, պարսից, հայոց և այլն):

Մակերայներ և սրանց տարբերութունը անականներից:

Բայ. գաղափար դերբայի մասին. անորոշ անկատար, ապառնի, վաղակատար, հարակատար և չենթակայական դերբայներ:

Ոժանդակ բայն անկատար ներկա և անցյալ ժամանակներով խոնարհելը. սահմանական լեզանակի բոլոր ժամանակները. ըղձական, չենթադրական և հարկադրական լեզանակներ:

Պատճառական բայերն ու նրանց խոնարհումը:
Կրավորական բայերի խոնարհումը:
Թվական անուն (քանակական և դասական). թվականների ուղղագրութունը (բորդ և երորդ անունները, քանակական թվականները տասներով գրելու կանոնները):

Գերանուններ (անձնական, ստացական, ցուցական, փոխադարձ, հարցական, հարբերական և անորոշ) և սրանց հորովումը:

Վորոշիչ, ստացական, ցուցական և դիմորոշ հոդեր:

Կապեր. նախադրութուններ (առանց, դեպի և այլն) և հետագրութուններ (մասին, համար և այլն), սրանց խնդրառութուններ:

Շարկապ (համադասական և ստորադասական):

Ձայնարկութուն:

Խոսքի մասերի փոխադարձ փոխանցումները (գոյականի վերածումն անականի և ընդհակառակը. բայի վերածումը գոյականի, անականի և այլն):

Հնչյունափոխության բոլոր դեպքերը (հնչյունափոխութունը վորպես շեշտի փոփոխության հետևանք):

Ք-ի և Կ-ի ուղղագրութունը բառավերջում. բառակազմության ավելի բարդ ձևերը (նաև յեմք, մակ, սրամ, բաղ և այլ նախածանցներով անանցավոր բառեր):

Վողջ ձևարանության ամփոփում:

Գրական-գեղարվեստական նյութերի քերականական վերլուծութուն:

6-րդ ԽՈՒՄԲ

1. Բանավոր լեզվի գրավոր խոսքի զարգացումը. — Բանավոր գեղուցում թեզերով:

Կազմել շարադրության մանրամասն նախագիծ (նախաբանով և վերջաբանով):

Կազմել բարդ կոնսպեկտ:

Համեմատական բնութագրում. չերկի գրական-գեղարվեստական պարզ քննադատական վերլուծութուն:

Խորացնել գրության գործնական ձևերի վարժութունները և սովորել նոր ձևեր՝ կոչ, աղտ և այլն: Ինքնուրույն գրավոր աշխատանքներ (նկարագրութուններ, տպավորութուններ կարգացած գրքերից և այլն):

Կազմել բարդ արձանագրութուններ:

2. Ընթերցանություն, գրելով լեզվի լրագրով աշխատանք. — Հավաքած լրագրային նյութերի սխտեմավորում և ոգաագործում լեզվիների ու գեղուցումների ժամանակ:

Ցիտատներ հավաքել սահմանված թեմայի համար:

Թղթակցութուններ «Պիտներ Կանչ» և այլ թերթերին:

Դասագրքի հոգվածներին գեղարվեստական ընթերցանութուն և վերլուծութուն. մեծ չափածո գրվածքների արտասանութուն:

Տնային ընթերցանութուն՝ վորոշ թեմաներով:

3. Քերականություն. — Խոսքը մասնորոշության կոնկրետ գրականում և բառերով: Նախադասութունը խոսքի քերականորեն ձևավորված կոնկրետ միավորն է:

Շարահյուսութիւնը վորպես նախադասութիւններ կառուցվածքի և կապակցութեան ուսմունք, լինելական և ստորոգյալը վորպես նախադասութեան գլխավոր անդամներ (բեկոններ), վորոնց շուրջը համախմբվում են նախադասութեան մյուս անդամները. լինելական լրացնող (կոնկրետացնող) անդամները (վորոշիչ, բացահայտիչ և հատկացուցիչ). հորիզոնները. ստորոգյալ և մյուս անդամները լրացնող (կոնկրետացնող) անդամները (պարագաներ, խնդիրներ՝ ուղիղ և վոչ ուղիղ). խնդրի հորիզոնները. բայերի սեռը (չեզոք, ներգործական, կրավորական և կրավորակերպ), պատճառական բայեր, ստորոգյալի անմիջական լրացումը հայցական հորիզով (ուղիղ խնդիր). նախադասութիւններ և հետադասութիւններ, սրանց հորիզական խնդրատեսակներ:

Նախադասութեան տիպերը (պարզ, ընդարձակ, միավորյալ և բարդ). պարզ նախադասութիւն՝ բաղկացած լինելակալից և ստորոգյալից. ընդարձակ նախադասութիւն՝ բաղկացած յինելակալից, ստորոգյալից և սրանց լրացումներից. բարդ նախադասութեան անդամներից մեկը կամ մի քանիսն արտահայտվում կամ լրացվում են պոսիտիւն (չերկրորդական) նախադասութեամբ: Միավորյալ նախադասութիւնը կազմված է մի լինելակալից և մի քանի ստորոգյալից կամ մի ստորոգյալից և մի քանի լինելակալներից, միավորում է մի քանի նախադասութիւն (որինակ՝ 1) նախադասը, քարտուղարը և հաշվապահը պարզեւտրվեցին. 2) նախադասը ներս մտավ, նստեց տեղը և ժողովը բացեց): Բարդ և միավորյալ նախադասութիւնները կարող են վերածվել համապատասխան քանակով պարզ նախադասութիւնների (նախադասը պարզեւտրվեց, քարտուղարը պարզեւտրվեց, հաշվապահը պարզեւտրվեց. նախադասը ներս մտավ, նախադասն իր տեղը զբաղեց, նախադասը ժողովը բաց արեց): Իրտեղ տալ վոճային (և իմաստի) տարբերութիւնն աչքպիսի դեպքերում:

Նախադասութիւնների համադասական կապակցութիւնը, համադաս և համաստորադաս նախադասութիւններ («հարվածայինը պարզեւտրվում է, հերոսը գնահատվում է, գործալիքը պատժվում է»): պարզեւտրվում դ նա, ով հարվածային է, ով արդարացնում է իր կոչումը և գերակատարում է պլանը ըստ ցուցանիշներիով). շաղկապների գործածութիւնը համադաս նախադասութիւնների միջև:

Նախադասութիւնների ստորադասական կապակցութիւնը. գլխավոր և չերկրորդական նախադասութիւն. առաջադաս, միջադաս և վերջադաս չերկրորդական նախադասութիւն, հարաբերական գերանունների գործածութիւնը («ով հարվածային էր, նա պարզեւտրվեց»): «նա, ով հարվածային էր, պարզեւտրվեց. «պարզեւտրվեց նա, ով հարվածային էր»):

Միջանկյալ բառեր և նախադասութիւններ (Շնախադասն, այն, պարզեւտրվեց», «հարվածայինն, ինարկէ, պիտի գնահատվի», «Արամը, ասում են, չի արդարացնում իր կոչումը»):

Անենթակա նախադասութիւններ. բայի անորոշ չեղանակով կազմված անստորոգյալ և անդեմ նախադասութիւններ, սրանց գերը և տեղը («ցուրտ է», «մթնեց», «բարձրացնել գործարանի արտադրողականութիւնը», «վերջ տալ թափթիվածութեանը», «առաջ, դեպի նորանոր նվաճումներ», «մահ պալատներին, խաղաղութիւնն խրճիթներին»):

Տրամաբանական շեշտը նախադասութեան մեջ և նրա դերը («կողմըն-

տեսութեան նախադասը պարզեւտրվեց», «կողմնատեսութեան նախադասը պարզեւտրվեց», «կողմնատեսութեան նախադասը պարզեւտրվեց»):

Կեսադրուրյուն. — Առուպանութեան, արոնութեան ու բացահայտութեան նշանները և նրանց գործածութեան բոլոր կանոնները:

Գեղարվեստական յերկից և հոգվածից վերցրած լեզվական նյութերի քերականական վերլուծութիւն:

7-րդ ԽՈՒՄԲ

1. Բանավոր լեզվ գրավոր խոսքի զարգացում. — Նախապատրաստված չելուծիներ՝ թե վորպես զեկուցող և թե վորպես մտքերի փոխանակութեան մասնակցող:

Յիտատներն ոչտաղործելու ունակութեան խորացում:

Հատվածների և ամբողջական չերկերի հասարակագիտական և շարադրական վերլուծութիւն:

Վոճի դասակարգանութեան դրսևորում կարգացածի մեջ:

Վերլուծական շարադրութիւններ և համառոտագրութիւն:

Գլուղի և քաղաքի հասարակական-արտադրական կյանքի գրավոր վերարտադրութիւնն ինքնուրույն աշխատանքի կարգով:

Ազատ թեմայով շարադրութիւն:

Բարդ գործնական գրութիւնների վարժութիւն:

2. Ընթերցանութիւն, գրով ու լրագրով աշխատանք. — Թեղիսներ և բանաձևեր կազմելու հմտութիւն (չեղրակացութիւններ ու առաջարկութիւններ): Առձեռն բառարանով ոգտվելու վարժութիւն:

Ծանոթութիւնն թերթի խմբագրականի մասին (պարզել թեմատիկան, կարողանալ վերլուծել և ըմբռնել խմբագրականի կառուցվածքը, պարզել վոճի առանձնահատկութիւնները):

Ընթերցանութիւն. գրքով և լրագրով աշխատանք: Գեղեցիկ և արտահայտիչ ընթերցանութեան և արտասանութեան վարժութեան խորացում:

Դասագրքի նյութերի ավելի խորը վերլուծութիւն:

Տնային ընթերցանութիւն վորոշ առաջադրանքով:

Լեզվի տեսութեան արտադրական գիտելիքներ լեզվաբանութիւն. — Գաղափար վոճի մասին, վոճը՝ մտքերի և գաղափարների արտահայտութեան վորոշ կազմ և կարգութիւն և ճշտութիւն. վոճի դասակարգային պայմանականութիւնը. ծանոթանալ Լենինի և Ստալինի վոճին: Վոճը՝ պատմական կատեգորիա:

Գրաբարյան վոճերի տարբեր վերապրումներն այսորվա հայերենում (ընդ ամին, այսու հանգերձ, այնուամենայնիվ, գոնէ, ինարկէ, համարյա, կեցցէ և այլն): Նույնանիշ, հոմանիշ, հականիշ բառեր, սրանց գործածութիւնը և դասակարգային վերաբերմունքի արտահայտութիւնը սրանց միջոցով (կույակ բառը հարուստ գլուղացի բառով փոխաբերելու տեղեկեցը կուլակներին մոտ, դիկասուրա և բուսութիւն, վարժապետ և ուսուցիչ և այլն):

Բառակազմութեան նոր ձևեր (հապավումներ) ժամանակակից հայերենում (ժողկոմխորհ, ժողլուս, ժողկապ, կոմկուս, կոմհամալսարան, ԲԳՏ, ՀԱՄԿԿ). հապավումների տեսակները, հոգակապի բացակայութիւնը նրանց մեջ:

Գրաբարյան վորոշ ածանցների և ձևերի կենդանացումը և դրա անհրաժեշտությունը կառուցվող պորտուգալական հայերենի համար (իրն ինքնին, գործարք, լուծարք, հանույթ, գործարկել, թվարկել, քննարկել, ի կատար ածել և այլն):

Տարրական գաղափար լեզվի ծագման մասին. — «Լեզուն՝ գործնական, ուրիշ մարդկանց համար գոյություն ունեցող, ուրեմն ինձ համար ևս գոյություն ունեցող իրական գիտակցություն է» (Մարքս): «Լեզուն՝ մարդկային հաղորդակցության կարևորագույն միջոց» (Լենին): Լեզվի, ինչպես և գիտակցության ծագումը «ուրիշ մարդկանց հետ հաղորդակցվելու անհրաժեշտությունից ու կարիքից»: Լեզվի զարգացումը կինետիկ և ձեռք լեզվից (հնչյունական վորոշ տարրերով) մինչև ներկա բարդ և զարգացած՝ հնչաարտաբերական լեզուն (արտասանության լեզուն ևս, միմիկան ու շարժումը հնչաարտաբերական լեզվի մեջ). լեզվի զարգացումը վորպես հասարակական կյանքի տարրերակման արտացոլում: Զարգացած և անդարգացած լեզուներ. եթնիկական (ժողովրդական) լեզու և գրական լեզու. լեզվի գասակարգչություն խնդիրը. տարբեր լեզուների փոխազդեցությունները, նմանություններն ու տարբերությունները: Լեզուն վորպես զարգացման լեզվակա սոցիալ-պատմական շերտ: ԽՍՀՄ-ի ազգային քաղաքականության մասը կազմող լեզվական քաղաքականությունը. ձևով ազգային բովանդակությամբ սոցիալիստական լեզուներ կերտելու հարցը. գրական լեզու և բարբառներ. բարբառների վերացման հեռանկարները՝ գասակարգերի վերացման և գլոբալ ու քաղաքի հակադրության վոչնչացման կապակցությամբ:

Վոզլ. քերականության ամփոփում:

8-րդ կՈՒՄԲ

1. Բանավոր լեզվի գրավոր խոսքի զարգացումը. — Ամբողջական գեղարվեստական լեզուների մասին վերլուծական շարադրություններ. տիպերի վերլուծություն, գրողների բանավոր և գրավոր բնութագրումներ. գրողների համեմատական բնութագրումներ. բանավոր գեղուցումներ (կոնսպեկտով և թեզերով):

2. Գրվող լեզվի լրագրող աշխատանք. — Գրքի ոգտագործման բոլոր ձևերը. ծանոթություն լրագրային նյութերի բոլոր տեսակներին (հոդված, թղթակցություն, լուրեր և այլն): Թերթի հոդվածի վերլուծություն (վերնագիր, թեմա, փաստեր, վոճական պրիոմներ և այլն):

3. Լեզվի տեսության տարրական գիտելիքներ. — Իմաստաբանությունը նախադասության, բառերի և ձևերի իմաստի շարժան ուսմունք. գասակարգային և ստադիալ գիտակցության գրսևորումը իմաստի մեջ (հոգին փչեց, արևը մալր մտավ, արեգակն, քվիարկել, ձեղքվածք, բաց, բան):

Գիր և ալբուրեն, գրի սաղմերը (առարկաներով գիր, կապագիր, պատկերագիր, վորի վերադրումները սերունդների մեջ կան, վանկագիր, տառ). հայ գրի առաջացումը 5-րդ դարում և նրա անհրաժեշտությունը. արդի լեզվի գրի և հնչյունի անհամապատասխանությունը:

Փոխառյալ բառեր և փոխառության սոցիալական պատճառները. հին

փոխառությունները (լեկեղեցի, կաթողիկոս, բագին, դժոխք, մարգարե), նոր փոխառություններ (տրակտոր, կոլեկտիվ, ուղի, տրամվայ):

4. Հայոց լեզվի պատմության տարրական գիտելիքներ. — Գրաբար լեզուն. գաղափար նրա հնչյունական, ձևաբանական և շարահյուսական սխառմի մասին (գրաբարի գոյականների հոլովման տարբերություններն աշխարհաբարից, գրաբարյան ածականները, թվականները (մեծատան), բայերն ու նախադրությունները և դրանց տարբերություններն աշխարհաբարից):

Հատկացուցչի և հատկացյալի հարաբերությունը գրաբարում և աշխարհաբարում. գրաբար ե-ն և է-ն, չերկրաբանները ու, իւ, աւ. եւ. «յ» կիսաձայնը գրաբարում և աշխարհաբարում:

Գրաբարը հայ ֆեոդալ իշխողների գասակարգային լեզուն է. դրան զուգընթաց գոյություն ունեցող գյուղացիական լեզուները. գրաբարի փոխառությունները շրջապատող լեզուներից՝ պարսկերենից, կովկասյաններից, ասորերենից, արաբերենից և այլն:

Միջին հայերենն առևտրա-ֆեոդալական իշխողների գասակարգային լեզու. միջին հայերենի կազմությունը (գրաբար և վոչ գրաբար լեզվաձևեր): Միջին հայերենում գրված գրական յերկերն ու տեսակները. միջին հայերենի հնչյունական ու ձևաբանական և շարահյուսական տարբերությունները և նմանություններն աշխարհաբարի և գրաբարի համեմատությամբ:

Հայ բուրժուազիայի կազմակերպման շրջանը (19-րդ դարի կեսերը). աշխարհաբարը վորպես բուրժուական և մանր բուրժուական գասակարգային լեզուների միասնություն: Աշխարհաբարի և գրաբարի պայքարը, վորպես գասակարգային պայքարի իդեոլոգիական արտահայտությունների միողակ. գրավոր աշխարհաբարը, գրական լեզուն, վորպես հայ բուրժուազիայի գասակարգային լեզուն. գրական հայերենի ստեղծման հիմնական պատճառները: Նազարյանի և Նալբանդյանի լեզվագիտական բարձրումները: Աշխարհաբար գրականին նախորդող շրջանները: «Հյուսիսափայլի» դերը բուրժուազիայի գասակարգային լեզու ստեղծելու ասպարիզում: Նախորդող գասակարգի լեզվական կուլտուրայի ոգտագործումը բուրժուազիայի կողմից: Աշխարհաբարի բարբառային մասը, վորպես մանր բուրժուազիայի լեզուներ: Բուրժուազիայի գասակարգային լեզվի ստեղծման աղբյուրները և այս լեզվի հեռագա մշակումը:

9-րդ կՈՒՄԲ

1. Բանավոր լեզվի գրավոր խոսքի զարգացումը. — Գեղարվեստական յերկերի մասին վերլուծական և քննադատական շարադրություններ. սեֆերատներ գրողների մասին. բանավոր գեղուցումներ գրական բնագիտություն և մասնավոր խնդիրների շուրջը:

2. Գրվող լեզվի լրագրող աշխատանք. — Գրքի և լրագրի մշակման ու ոգտագործման լրակատար գիտություն. կարողանալ յերկու և ավելի ողբյուրներից ոգտվել. մատենագրական (բիրլիոգրաֆիկ) և այլ ուղեցուցյաններից ոգտվելու գիտություն. բառարաններով ոգտվելու ունակություն. լրակատար ծանոթություն լրագրային աշխատանքների հետ:

3. Հայոց լեզվի պատմության տարրական գիտելիքներ. — Հայերենի բարբառների հիմնական բաժանումը կր, ում, և ել (ևս) ձյուղերի: Հայերենի բարբառ-

ների թվարկումն ու տարրական դադարի նրանց մասին: Բուրժուա-դե-մոկրատական գրական լեզվի և բարբառների հարաբերությունը և փոխադարձ ներթափանցումները: Բուրժուական քրական հայերենի ստեղծման ու զարգացման հիմնական աղբյուրները: Հայոց գեղարվեստական գրականութան դերը գրական հայերենի զարգացման գործում: Գրական հայերենի դասակարգային բնույթը: Այդ հայերենի ուղղագրությունն ու նրա դժվարությունները: Բուրժուազլայի լեզվական քաղաքականությունը: Պրոլետարական հեղափոխությունը Հայաստանում, նոր սոցիալական հարաբերությունները և նոր մասնագիտության կազմավորումը, նոր լեզվի պահանջը: Նոր լեզվի ստեղծման համար գրաբարի ոգտագործումը, բուրժուական գրական լեզվի դասակարգային հատկությունների չեզոքացումն ու այդ կուլտուրայի հաղթանարման խնդիրը:

Կառուցվող հայ պրոլետարական լեզվի այլ աղբյուրները՝ բարբառներ, ոտար լեզուներ, առևտրեն և այլն:

Հայերենի ուղղագրության ուղղորդումը և նրա բնույթը: ԽՍՀՄ-ի աղագլխն քաղաքականությունը և ազգային լեզուների խնդիրը: Պրոլետարական գրական հայերենի՝ ձևով ազգային միասնական լեզու դառնալու հեռանկարները և բարբառների վերացումն անդասակարգ հասարակություն ստեղծման կապակցությունը: Համաշխարհային պրոլետարական հեղափոխությունը և համամարդկային լեզվի խնդիրը:

10-ԲԳ ԽՈՒՄԲ

VIII և IX խմբերում անցած նյութերի կրկնություն և ամփոփում: Կրկնություն կարգով քերականական վերլուծություններ՝ առանձին ուշագրություն նվիրելով շարահյուսության և կետագրության: VIII և IX խմբերի գրավորները տեսակները խորացում (պեֆերատներ, գեկուցումներ, գրական վերլուծություններ և այլն):

Աղբյուրներ.— Հայոց լեզվի պատմության և լեզվի տեսության համար հանձնարարվում և ոգտագործել Ա. Ղարիբջանի «Ներածություն հայոց լեզվի պատմության» առաջադրությունները (Հեռակա Մանկավարժական ինստիտուտի հրատարակություն) և պրոֆեսսոր Աճառչանի «Հայ բարբառագիտության» գրքի փաստական մասը:

Ծրագիրը կազմել և ՀՍԽՀ Լուստողիտատի Ծրագրամեթոդական կայանի լեզվի և գրականության սեկցիան: Ծրագիրը կազմելու աշխատանքների մասնակցել են՝ Ա. Ղարիբջան, Մ. Մկրտչյան, Սեփակ, Սիմակ, Գ. Ներսիսյան, Խ. Կանաչյան, Վ. Նազիրյան, Կ. Դուկասյան և Մ. Գասպարյան:

Կոնսուլտանտ՝ պրոֆ. Գ. Դափանցյան:

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Յ Յ Ո Ւ Ն


Բացատրական¹⁾

Գրականության ուսուցումն ուսման հինգերորդ տարում նախապատրաստական բնույթ պետք և կրի և նպատակ ունենա սպահովելու գեղարվեստական գրականության մասին փաստական գիտելիքների նվազագույնը, ինչպես և սովորեցնելու գեղարվեստական չերկի ելույթները ճիշտ ըմբռնել (պատմական և դասակարգային)՝ գարգացնելով միաժամանակ հետաքրքրություն դեպի ինքնուրույն ընթերցանությունը:

Ուսման այս տարվա (նույնը և առհասարակ մյուս տարիներին համար) մշակվելիք գրական չերկերն ընտրելիս հաշվի չեն առնված սովորողների տարիքից (11—12 տարեկան) բխող մանկաբանական-մանկավարժական պահանջները՝ մնալով խուսափելով ավելորդ ծանրաբեռնվածությունից: Դրա հետ միաժամանակ ընտրվել են սոցիալական-գեղարվեստական կարեւորություն ունեցող չերկեր: Հետհոկտեմբերյան գրականությունից նյութեր ընտրելիս հաշվի չեն առնված սոցիալիզմի համար մղվող պայքարի խնդիրները՝ հեղափոխության զարգացման տարբեր եռասուներորդ:

Վորդեպսի սովորողի համար հեշտ լինի գեղարվեստական չերկի ճիշտ ուսումնասիրությունը, նյութերն անցնելիս պետք և պահպանվի վորոշ հետևողականություն, սկզբում պետք և վերլուծել ժամանակակից գրողների գործերը, վորոնք սովորողին նյութ են տալիս նրան ավելի մոտ և հասկանալի կյանքից: Ժամանակակից գրողների գրվածքներից հետո, ծրագրում տրված են մի շարք հատվածներ մեր անցյալի գրողների ստեղծագործություններից (Աղայան, Թումանյան, Միրաքյան), վորոնց վերլուծությունը վորոշ գեղարվեստներն ունի խորհրդային դպրոցի աշակերտության համար այն իմաստով, վոր այդ գործերի թեմատիկան և իգեական ուղղությունն այժմեյական չեն: Այդ գրողների նկատմամբ դասատուն պետք և առաջնորդվի Անինյան սկզբունքներով կուլտուրական ժառանգության մասին, հաշվի առնելով և՛ պրոգրեսիվ, և՛ դասակարգայնորեն անընդունելի մոմենտներն այդ գրողների ստեղծագործության մեջ:

¹⁾ Ուսուցման V, VI և VII խմբերում գրականության ձրագրով տրվում են միայն գրական նյութեր և վոր թե գրականության սխառմատյիլ ամբողջական պատմություն: Ստանդանդում և, վոր տրվող Այսպիսի ավյալ հեղինակի ստեղծագործությունը լրիվ բնորոշելու համար կարող են բավարար չլինել: Հենց նույն սկառատումով էլ մշակված կարգերը չեն շոշափում ավյալ հեղինակի ամբողջական ստեղծագործությունը (մանավանդ V և VI խմբերում), այլ միայն ծրագրում մտած կոնկրետ նյութերը: Ընդհանրացումներ տրվում են VI խմբից սկսած, բայց մեծ մասամբ VII խմբում:



Գեղարվեստական լերկերի մշակման հետևանքով արված գիտելիքները սխտեմատիկ կերպով ամրացնելու նպատակով՝ պետք է աստիճանաբար սովորողներին մատչելի ձևով չտրացնել տալ մի քանի գրական-տեսական խնդիրներ, զարգացնելով հետևյալ հասկացողությունները.

1. Գրականություն իրականության դասակարգային ճանաչողության և վերափոխման, դասակարգային պայքարի և տիրապետության զինք է:
2. Գեղարվեստական գրականության առանձնահատկությունն այն է, վոր նա իրականությունն արտացոլում է պատկերների միջոցով:
3. Գրական ժառանգության նշանակությունը և այն ուսումնասիրելու անհրաժեշտությունը:

Դասատուն պետք է աշակերտությանը հաջորդաբար ծանոթացնի նաև գրական զանազան ժանրերի առանձնահատկություններին հետ: (V խմբում եպիկական ժանրի, VI և VII խմբերում լիրիկական և դրամատիկական ժանրերի գրվածքներին հետ):

5-րդ ԽՈՒՄԻ

Ժամանակակից հայ խորհրդային գրականություն

1. Հակոբ Հակոբյան. — «Բանվորի լերգը», «Մայիս մեկյան յերգ», «Յես այն եմ սիրում», «Բայլընիկ և Շիրկանալը»:

Հակոբյանն իբրև պրոլետարիատի հողթանալից գաղափարների լերգիչ, նրա բանաստեղծությունների պարզությունն ու մատչելիությունը: Սոցիալիստական շինարարության պատկերացումը «Բայլընիկ և Շիրկանալը» պոյեմում. թեմայի աստիճանական զարգացումը պոյեմում:

2. Յե. Չարենց. — «Գարուն», «Մահվան քայլերգը»:

Սորերգային հայրենիքի անդուլ աճման հավատքի բարձր տրամագրության արտահայտությունը «Գարուն» բանաստեղծության մեջ: Համաշխարհային պրոլետարիատի առաջնորդ Լենինի թաղման առթիվ՝ հեղինակի հեղափոխական մտքերի և զգացմունքների արտահայտությունը «Մահվան քայլերգ» բանաստեղծության մեջ:

3. Ա. Բակունց. — «Բուռտի տղան», «Մուրոյի գրուլցը»:

Բուռտի տղա Անդուլի տիպը, նրա մտածողության փոփոխության պատճառները: Բնության տեսարանների հաջող նկարագրերը Բակունցի պատմվածքներում, այդ նկարագրի հուզականությունը: Գաղափար գրուլցի մասին: Լենինի նկարագրերը հետաքննազ չքավոր գյուղացիության բանահյուսության մեջ («Մուրոյի գրուլցը»):

4. Գ. Դեմիրճյան. — «Գարնաններ», «Արդուլը»:

Բնութագրել Դեմիրճյանի պատկերացրած բանվորների տիպերը. (Սարգիս, Արդուլ): Սարգիսը վորպես բանվորների մեջ աշխատանքի ենտուղիազմ ներշնչող: Սորերգային գործարանային կյանքի ազդեցությունը Պարսկաստանից յեկած բանվոր Արդուլի հոգեբանության վրա. նրա հասկացողությունների հետզհետե փոխվելը: Գործարանի հրգեհի նկարագրերը «Արդուլը» պատմվածքում:

4. Սե. Չարյան. — «Զրհորի մոտ», «Սպիտակ քաղաք» (հատված):

Իմպերիալիստական պատերազմի արհավիրքները և հակառակորդ բա-

նակների աշխատավորական ծագումով ղինվորների յեղբայրացման պատկերացումը «Զրհորի մոտ» պատմվածքում: Սոցիալիստական քաղաքի և նրա գաղափարների հեռանկարների պատկերացումը «Սպիտակ քաղաքում»: Զորյանի լեզվի առանձնահատկությունները, պարզություն և մշակվածություն: 6. Գ. Մահարի. — «Զրույց Նոյեմբերի մասին»:

Հայաստանի սոցիալիստական հեղափոխության ետպնների պատկերացումը «Զրույց Նոյեմբերի մասին» պոյեմում. պոյեմի հանդարտ պատմողական-գրուցային ձևը:

7. Առազի. — «Սորհրդալին առալոտ», «Լույսերը»:

Բանտարկված հեղափոխական մարտիկների հոգեբանության պատկերացումն իրենց ազատության նախորդակին: Գյուլի դասակարգային պայքարի արտացոլումը «Լույսերը» պատմվածքում:

8. Ալազան. — «Տպարանում» (հատված «Ճանապարհին» վեպից):

Յերիտասարդ բանվորության աշխատանքի նկարագրերը տպարանում: Բնութագրել «Մաշինա» Արտաշին և «Դասակարգ» Հայրույնի վորպես բանվոր հարվածայիններին:

9. Վ. Նորենց. — «Հայրը», «Մահմանապահը»:

Հեղափոխության և սոցիալիստական շինարարության բանվոր մարտիկի նկարագրերը «Հայրը» բանաստեղծության մեջ: Սորհրդալին հայրենիքի սանձանների անձեռնմխելիության գաղափարը «Մահմանապահը» բանաստեղծության մեջ:

10. Ն. Զարյան. — «Բուրքը, մարդը, մեքենան», «Տրակտորը» (հատվածներ «Ռուշանի Գարափ»-ից):

Գյուլի սոցիալիստական վերականգնման, կոլտնտ. շարժման պատկերացումը: Նոր հասկացողություններ աշխատավոր գյուղացիների մեջ կոլեկտիվ աշխատանքի կազմակերպման և մեքենայացման շնորհիվ: «Ռուշանի Գարափը» իբրև եպիկական պոյեմ. նրա պարզ պատմելու յեղանակը:

11. Գ. Սարյան. — «Հավաքը» (կրճատ) «Յերգ տարեդարձի»:

Սոցմրցման և հարվածայնության կոչը և խրախուսանքը «Հավաքը» բանաստեղծության մեջ: Սոցիալիստական շինարարության տասերկու տարվա նվաճումների պատկերացումը «Յերգ տարեդարձի» պոյեմում:

ՀԱՅ ԱՆՑՅԱԼԻ ԳՐԱԿԱՆ ՓՍՈՒԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Գ. Աղայան. — «Ճախարակ», «Ճաղարենց Թաթոսը» (հատված «Յերկու քուլը» վեպից):

Նոր լերևույթներ գյուլի Հասարակական կյանքում առևտրա-արդյունաբերական կոպիտալիզացիայի շրջանում: Գյուլի դասակարգային շերտավորման արտացոլումը «Ճախարակ» բանաստեղծության մեջ: Ճաղարենց Թաթոսը վորպես գյուղական կուլակի տիպ:

2. Հ. Թումանյան. — «Նեսոյի քարաբաղնիսը», «Անիծած հարսը»:

Նահապետական գյուղացու կենցաղի և հոգեբանության պատկերացումը Թումանյանի յերկերում: Աղաթի և հետաքննազության զոհերը «Նեսոյի քարաբաղնիսը» և «Անիծած հարսը» գրվածքներում. Նեսոյի տիպը. ճակատագրի հավատքը գյուղացիների մեջ: Թումանյանի պարզ և «համով հոտով» պատմելու շնորհքը:

3. Վ. Միրախյան. — «Քոչը» (հատված «Լավարի վորս»-ից):
Գաղափար հովվերգության մասին: Պոեմի նկարագրական մասի գե-
զեցիկությունները, գունագեղ պատկերներ և ճոխ բառարան:

Խորհրդային յեղբայրական ժողովուրդների գրականություն

1. Քոչի յեղի «Աշխատանքի ցերգը»:
2. Մուղաուիլի «Զագես»:
3. Մ. Բաֆիլ «Կարմիր Հնդկաստան»:
4. Սերաֆիմովիչ. — «Յերկաթի հեղեղ» (հատվածներ):

Վեպի թեման: Կովկասյան քաղաքացիական կռիվների պատմական
փաստերը վորպես մատերիալ: Կոթուլը վորպես մասանների կողմից առաջ
քաշված առաջնորդի ախպ: Վեպի գեղարվեստական արժեքները: Գործողու-
թյան ուժեղ ընթացք, արշավի եպիզոդների վառ և գունագեղ նկարագրու-
թյուն:

XIX Գարի արեվմսայելրոպական գրականություն

1. Վ. Հյուգո. — «Դիրքերի վրա», «Գավրոշը» (կրճատ):
Հեղինակի համակրական վերաբերմունքը դեպի հեղափոխական մարտիկ-
ները: Համեմատել Գավրոշի և փոքրիկ կոմունարի ախպերը: Հասարակու-
թյան ազքատացած շերտերի մանուկներին հերոսացումը:
2. Ն. Զոլա. — «Ինտերնացիոնալը բանվորների մեջ», «Գործադուլա-
վորների հավաքը» (հատվածներ «Ժերմինալ»-ից):
Բանվորական մասսայական տեսարանների և շարժումների գրամատիկ
նկարագրերը: I Ինտերնացիոնալի շրջանի գործադուլավոր բանվորների հո-
գեբանություն պատկերացումը: Հեղինակի սեպիզմը:

6-ՐԴ ԽՈՒՄԲ

Բ ա ց ա տ ր ա կ ա ն

Հինգերորդ տարվա նախապատրաստական բնույթ կրող ծրագրի մշակման
հիման վրա ուսման վեցերորդ տարվա ընթացքում սովորողը պետք է անց-
նի 19 և 20-րդ դարի մեր մի շարք խոշոր գրողների գործերի ավելի սխ-
տեմատիկ ուսումնասիրության:

Այս տարվա, ինչպես և հաջորդ (լոթերորդ) խմբի ծրագրում նշույթերը
գասավորված են պատմականության սկզբունքով:

Ուսման վեցերորդ տարվա ծրագրի խնդիրներն են՝ սովորողներին ծա-
նոթացնել 19 և 20-րդ դարերի հալ գրականության մի շարք լավագույն
նմուշների հետ, չերևան բերելով միաժամանակ այդ ժամանակաշրջանի հայ
գրականության պատմական զարգացման ընթացքը և այնուհետև ամբողջել
ու ավելի խորացնել հինգերորդ տարում սովորած նրանց գիտելիքները գե-
ղարվեստական յերկի առանձնատկությունների (սպեցիֆիկումի) մասին:

Այս տարվա ծրագրում նշված գրական գործերի ուսումնասիրության
ժամանակ պետք է կանգ առնել բացի 5-րդ խմբի ծրագրում առաջադրած
խնդիրներից, նաև հետևյալ տեսական հարցերի վրա.

1. Գրողի դիրքը տվյալ ժամանակաշրջանի դասակարգային պայքարում
պայմանավորվում է այն դասակարգի բունած տեղով ու կատարած դերով,
վորի գաղափարխոսությունն է արտահայտում նա:

2. Գեղարվեստական գրականության պատկերները վոչ թե սոսկ մաս-
նակի նկարագրումներ են, այլ դրանց միջոցով տրվում են հասարակական
տարբեր դասակարգերի կյանքի ախպական ընդհանրացումներ՝ (մարդկանց,
անցքերի, հարաբերությունների և այլն):

Գեղարվեստական պատկերներին հատուկ է ընդհանրացող կարողու-
թյուն, վորը պայմանավորում է գրական յերկի ճանաչողական-ներգործոն
բնույթը և նրա գեղարվեստական արժեքը:

6-ՐԴ ԽՈՒՄԲ

Հայ առեվտրա-արդյունաբերական կապիտալիզմի ժրջանի գրականություն

1. Խ. Աբովյան. (1804 — 1848),
«Հառաջարան» (հատված «Վերք Հայաստանից») «Ես դրքի ճամփի խրա-
տը» («Պարապ վախտի խաղալիք»-ից):
Համառոտ պատմական կենսագրական տեղեկություններ:
Աբովյանի տեսակետներն աշխարհաբար լեզվի և գրականության աշ-
խարհիկ բովանդակության մասին, վորպես բուրժուական լուսավորակա-
նության արտահայտություն:
Քնարերգական ուժեղ շեշտ Աբովյանի «Հառաջարան»-ում:
2. Պ. Պոռոյան. — (1837 — 1909),
«Միկիտան Սաքոն»:
առմական-կենսագրական տեղեկություններ:
Կապիտալի նախնական կուտակման ընթացքը հալ գյուղում. բնու-
թագրել Միկիտան Սաքոյի ախպը, վորպես կապիտալ կուտակողի. կուտակ-
ման ավազակային ճանապարհների մերկացումը Պոռոյանի կողմից: Բար-
բառային տարրը Պոռոյանի լեզվի մեջ: Պոռոյանի վոճի ճապաղությունը:
3. Մոռացան. — (1854 — 1909),
«Նոյի ագոավը» (կրճատ):
Մուրացանի «գլուղափրկիչ» ծրագիրը և նրա մանր բուրժուական բնույ-
թը: Բնութագրել Վեդունց Սարգսի, Վանու և Տեր Մակուչի ախպերը: Վեդունց
Սարգսի վորպես հեղինակի իգեաններն արտահայտող հերոս. Աուրացանի
առմանախոսը: Լեզվի պատկերավորությունը:
4. Հ. Հովսեփյան. — (1864 — 1929),
«Փափագ», «Ախ տվեք ինձ», «Ալագյազ բարձր սարին», «Արտավազ»,
«Դեպի վեր»:
Կյանքից խուսափելու տրամադրությունների արտահայտությունը Հով-
հաննիսյանի բանաստեղծությունների մեջ: Այդ տրամադրությունների մանր-
բուրժուական արմատները: Ժողովրդական բանահյուսության մշակումը, իր
աշխարհայացքի համաձայն, «Արտավազ» բալլադում:
5. Հ. Պարոնյան. — (1840 — 1891),
«Արիստղոմ աղան և բանաստեղծը» (հատված «Մեծապատիվ Մուրաց-
կաններից») «Հոսոսի ձեռատետրը» (հատվածներ):

Համառոտ կենսագրական-պատմական անդեկուսթյուններ: Պարոնյանի ստեղծագործական ժանրի առանձնահատկությունները: Պարոնյանն իբրև ֆեոդալական-բուրժուական բարքերի սուր խարաղանոց և ծաղրող՝ իր ժամանակի մանր բուրժուական դեմոկրատական աչքի ընկնող հեղինակներինց մեկը: Բնութագրել Արխոդոմ աղաչի և բանաստեղծի տիպերը: Ազգայնականություն և մեղչանական կենցաղի հումորական ծաղրը «Հոսոսի ձեռատետրը»-ում: Արևմտահայ գրական լեզվի առանձնահատկությունները և Պարոնյանի լեզվի պարզությունը:

6. Վ. Փափազյան. — «Ձրըչո քար», «Հողի աշխատավորը», «Լուր-դալուր»:

Բուրժուազիայի տիրապետության ժամանակվա հայ գյուղի սոցիալական կյանքի պատկերացումը Փափազյանի պատմվածքներում. Փափազյանի գյուղական վաշխառու կեղեքիչների տիպերը (Հաբեթ աղա, Մելիք աղա), գյուղացիների անգոր պաշքարի արտահայտություններն իրենց կեղեքիչների դեմ. (մանր բուրժուական բունտարարություն — «Ձրըչո քար»), դասակարգային հակադրության պատկերը «Լուր-դալուր»-ի մեջ: «Լուր-դալուր»-վորպես արձակ բանաստեղծության մտեցող պատմվածք՝ լիրիզմի ուժեղ արտահայտությամբ: Լեզվի ճոխությունն ու գունագեղությունը:

7. Հ. Թումանյան. — (1869 1923). «Լոռեցի Սարոն», «Անուշ» (հատվածներ), «Հառաչանք»: «Մասունցի Դավիթ»:

Համառոտ պատմական կենսագրական անդեկուսթյուններ: Թումանյանը վորպես դեմոկրատական գյուղացիական ղեկավար ընդհանուր բանաստեղծը:

Դադափար եպիկական բանաստեղծության զանազան տեսակների մասին: Նահապետական կենցաղի և հասկացողությունների քննադատությունը «Անուշ» և «Լոռեցի Սարոն» պոեմներում: «Անուշ» և «Հառաչանք» պոեմները, վորպես գյուղի սոցիալական կյանքի տարբեր շրջաններ պատկերացնող գրվածքներ: Ժողովրդական ավանդությունների և հպոսի մշակումը: Մասունցի Դավիթը վորպես հեղինակի աշխատավորական-դեմոկրատական և պացիֆիստական (խաղաղասիրական) արամադրությունների արտահայտիչ: Հիպերբոլները վորպես Թումանյանի ստեղծագործության պոլիտիկական պրիոններից (ձևերից) մեկը: Լեզվի և վոճի ծալրաստիճան հղկվածությունը:

8. Շիրվանզադե. — (1858):

«Վարդան Ահրամյան», «Մարկոս Ալիմյանի ընտանիքը» և «Հրդեհը նավթահանքում» (հատվածներ «Քառու»-ից): Շիրվանզադեի վորպես բուրժուական ուսուցիչ: Բնութագրել Վարդան Ահրամյանին և իր հորը, վորպես կապիտալի կուտակման ներկայացուցիչներ: Յերգիծանքի տարբերը, «Վարդան Ահրամյան» պատմվածքում: Բուրժուական ընտանեկան կյանքի արատավոր կողմերի մերկացումը: («Մարկոս Ալիմյանի ընտանիքը»): Բանվորների նկարագիրը նավթահանքի հրդեհի ժամանակ: Նրանց նվիրվածություն պատկերացումն իրենց բուրժուա տիրոջը, վորպես Շիրվանզադեյի բուրժուական մտածողության արտահայտություն: Հրդեհի ճոխ պատկերավոր նկարագիրը:

834 924 938

1. Նինոսովի. — «Գոգիա Ուիշվիլի»:

Վրացական աշխատավոր գյուղացու կյանքի պատկերացումը բուրժուա-ֆեոդալական կարգերի պայմաններում: Դեպքերի ցնցող նկարագրությունն այս պատմվածքում:

2. Պուսկին. — «Աքսորյալներին», «Ձմրան իրիկուն», «Սվյատագոր»-ը:

Պուսկինի իդեոլոգիական մտախոհությունը դեկաբրիստներին՝ նրանց ապստամբության նախապատրաստության հոսպում: Միբիրում տանջվող դեկաբրիստների խրախուսումը «Աքսորյալներին» բանաստեղծության մեջ: Ժողովրդական մտախոհների ոգատագործումը և մշակումը Պուսկինի կողմից:

3. Լեռմոսով. — «Մցիրի» (հատվածներ):

Լեռմոսովի ստեղծագործությունը վորպես Նիկոլայան ռեակցիայի եպոխոսի առաջավոր ազնվականության հիպոթեզային և բողոքի դեղորվեստական արտահայտություն: «Մցիրի»-ի իդեական բովանդակության բարդությունը, առանձնություն և մեկուսացման թախիծն այդ պոեմում:

19-ՐԴ ԴԱՐԻ ԱՐԵՎՏԱՅԵՎՐՈՊԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ֆ. Շիրլե «Վիլհելմ Տելլ» (հատվածներ):

Գեսլերը վորպես ֆեոդալականության ներկայացուցիչ բռնակալի տիպ: Գյուղացիության կեղեքման ցուցադրումը: Տելլը վորպես ազգային տնտեսական շահագործման դեմ պաշքարողի տիպ: Տելլի և գյուղացի — դավադիրների հեղափոխականության սահմանափակվածությունը:

2. Հ. Հայնե. «Ձուլհակներ»:

19-րդ դարի 30-ական թվականների Գերմանիայի քաղաքական-տրնտեսական ճնշման մերկացումը. ֆեոդալական վոստիկանական մեռնող պետության համար «պատանք գործող» ստրկացված պրոլետարիատի պատկերը: «Ձուլհակները» վորպես քաղաքական քնարերգության լավագույն նմուշներից մեկը:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

1. Ժողովրդական հպոս («Մասմա ծներ»):

2. Ժողովրդական քնարերգություն (աշխատանքի, սիրո և այլ լերգեր):

3. Առածներ և հանելուկներ:

ՅՈՒՆԵՍԿՈՒԻ ԽՈՒՄԲԵ

Բ ա ց ա ս ր ա կ ա ն

Ուսման յոթներորդ տարվա խնդիրներն են՝ ամբողջացնել 19 և 20-րդ դարերի հայ գրականության մասին արված գիտելիքները, շարունակել ԽՍՀՄ ժողովուրդների և յեվրոպական գրականության ուսումնասիրությունը, կոնկ-

րեա լերկերի վերլուծման միջոցով լայնացնել և խորացնել գրականութեան առանձնահատկութեան (սպեցիֆիկումի) հասկացողութիւնը: Այնուհետև պարզաբանել ժամանակակից գրականութեան զարգացման խնդիրները և գրականութեան (թե՛ ժամանակակից և թե՛ անցյալ կլասիկ) դերը սոցիալիստական հասարակարգի կառուցման համար մղվող պայքարում:

Այս տարվա ծրագրում նշված լերկերի մշակման ընթացքում անհրաժեշտ է միաժամանակ ավելի խորացած, քան նախորդ տարիներում, կանգ առնել հետևյալ գրական հարցերի վրա:

1. Կուլտուրական ժառանգութեան մասին Լենինի ասուլիսները, աշակերաններին սովորեցնել այդ հայեցակետով վերլուծել անցյալի գրական յերկերը:

2. Ծանոթացնել և հասկացողութիւն տալ գրական ուղղութիւնների մասին՝ ռոմանտիզմ, ռեալիզմ, և այլն, կանգ առնելով մասնավորապես սոցիալիստական ռեալիզմի վրա:

3. Ժամանակակից խորհրդային գրողների լերկերի ուսումնասիրութեան հիման վրա ցույց տալ պրոլետարական գրական վոճի զարգացումը և առհասարակ խորհրդային գրականութեան աճման պատկերը:

Այս խմբում պետք է գաղափար տալ խորհրդային Միութեան լեղրաչրական ժողովուրդների գրականութեան մասին, վորպես ձևով ազգային՝ բովանդակութեամբ սոցիալիստական գրականութիւն:

20-րդ դարի հայ գրականութեան (Նախահոկսեմբերյան) ԵՐԶԱՆ

1. Նար-Ռոս (1867 — 1933): — «Հոգուն վրա հասավ», «Սև փողերի տուկոսը», «Աննա Սարոյան» (հատվածներ) «Նեղ որերից մեկը»:

Քաղաքի մանր բուրժուական տարրերի քայքայման և անել փակուղու մեջ գտնվելու պատկերացումը Նար-Ռոսի պատմվածքում:

Նար-Ռոսի մանր բուրժուական ինտելիգենտ տիպերը՝ Աննա Սարոյան, Պատրիկյան, սրանց տրագիկ վիճակի և վախճանի հասարակական պատճառը: Համեմատել Պատրիկյանի, Չափինյանի տիպերը («Նեղ որերից մեկը»), հակադրութիւնները վորպես Նար-Ռոսի պոլիտիկական պրիոմներից մեկը: Նար-Ռոսի վոճի գրամատիկ բնույթը:

2. Ա. Իսահակյան. — (1875):

«Արագյաղի մանիներ» (հատվածներ), «Արագի ափին», «Ախ մեր սիրարը», «Կյանքի կովում»:

Իսահակյանի պոլիգլոսի մանր բուրժուական բնույթը. նրա անհատապաշտական բողոքը «քար աշխարհի» դեմ:

Իսահակյանն իրեն լիրիկ (քնարերգու), Շիրակի բարբառի տարրերը նրա լեզվի մեջ: Իսահակյանի լեզվի ճոխութիւնն ու արտահայտութեան ուժգնութիւնը:

3. Շ. Կուրդինյան. —

«Հանգրբ ջահերը», «Բանվորները»:

1905 թվի հեղափոխութեան, բանվորութեան հեղափոխական վերելքի

չրջանի տրամադրութիւնների արտահայտութիւնը Կուրդինյանի բանաստեղծութիւնների մեջ: Նրա բանաստեղծութիւնների ուժեղ պաթոսը:

4. Վ. Տերյան. — (1885 — 1920):

«Լուսածագին», «Պահիր վառ», «Արևածագ», «Գարուն», «Վերադարձ», «Շշուկ ու շրջուն», «Տրամութիւն», «Հրաժեշտի գաղել»:

Համառոտ պատմական և կենսագրական տեղեկութիւններ:

Բուրժուական իրականութիւնից դժգոհ՝ մանր բուրժուական հեղինակի հոռետեսութեան մոտիվները: Տերյանի մասնակցութիւնը Հոկտեմբերյան հեղափոխութեանը և այդ մասնակցութեան վորոշ նախադրայինները նրա նախահոկտեմբերյան շրջանի ստեղծագործութիւնների մեջ: («Արևածագ», «Գարուն», «Վերադարձ»):

Պրոլետարական հեղափոխութեան վորոշ տրամադրութիւնների արտացոլումը նրա հեռահոկտեմբերյան շրջանի բանաստեղծութիւնների մեջ («Պահիր վառ», «Լուսաբացին» և այլն): Տերյանը վորպես լիրիկական բանաստեղծութեան խոշորագույն վարպետը մեր գրականութեան մեջ. նրա վոտանավորների ութիմը և չերաժշտականութիւնը, հանգրբի կատարելութիւնը, լեզվի մշակվածութիւնը և չափի զգացմունքը:

5. Հ. Հակոբյան. — (1869):

«Կարմիր գարնան», «Հեղափոխութիւն», «Մեռան չկորան», «Նոր առավոտ» (հատվածներ):

Համառոտ կենսագրական տեղեկութիւններ Հակոբյանի մասին:

Հակոբ Հակոբյանի բանաստեղծութիւնները վորպես պրոլետարական բանաստեղծի՝ դեպի պրոլետարիատի ուժը և նրա վերջնական հաղթանակը ունեցած հաստատ հավատքի արտահայտութիւն: Հակոբյանը վորպես մեր առաջին պրոլետարական գրողը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՅՆ. Չարենց. —

«Ամբոխները խելագարված», «Դեպի ապագա», «Հոկտեմբերի 25—26-ը», «Յերկիր Նայիրի» (հատվածներ), «Չուզուհե մարդը»:

Հոկտեմբերյան հեղափոխութիւնը և գրականութիւնը: Պրոլետարական հեղափոխութեան հերոսիկան Չարենցի պոլիմներում: Անարխիզմի վորոշ արտահայտութիւններ «Ամբոխները խելագարված» պոլիմում: Դաշնակցութեան մերկացումը և քննադատութիւնը «Յերկիր Նայիրի» վեպում: Սոցիալիստական վերակառուցման պատկերացումը «Չուզուհե մարդը» պոլիմում: Չարենցի լեզվի գունագեղութիւնը. հիպերբոլները նրա եպիկական պոլիմներում:

2. Ա. Վեսունի. — (1894):

«Արևելքը հուր է հիմա», «Ռամ Ռոյ» «Ուղտը», «Աղբերջան»:

Արևելքի ճնշված գաղութային ժողովուրդների ազատագրական շարժումների արտացոլումը Վշտունու ստեղծագործութիւնների մեջ: Հեղափոխական ռոմանտիկական Վշտունու պոլիմներում («Ռամ Ռոյ»): Սորերդային Արևելքի նկարագիրը «Աղբերջան»-ում: Լեզվի և պատկերների արևելյան չերանգավորութիւնը:

3. Գ. Դեմիրճյան.

«Ռաշիդը» (հատվածներ):

Իրդական գյուղի դասակարգային պայքարի պատկերացումը հեղափոխության և վերականգնման շրջանում: Ռաշիդը վորպես դասակարգային գիտակցության լեզու բատրակի տիպ. Հասան բեկի և մյուս կուլակների խորհրդային իշխանության դեմ պայքարելու մեթոդները («Կուսակցության մոտենալը»), աշխատավոր գյուղացիության կողմից Հասան բեկի և իր թայֆայի հակախորհրդային դեմքի մերկացումը:

Արգրելի նկարագրությունները (տեղի բնության տեսարաններ) վորպես Դեմիրճյանի պոետիկական պրիոմներից մեկը:

4. Աս. Զորյան. — (1890):

«Պատերազմը»:

Իմպերիալիստական պատերազմի քայքայիչ ազդեցությունը գյուղի աշխատավորական մասսաների վրա: Բնութագրել «Պատերազմը» պատմվածքի գլխավոր հերոսներին: Զորյանը վորպես նովելիստ: Նրա լեզվի մշակվածությունը:

5. Ա. Բակունց. — (1899). «Մթնաձոր» (առանձին պատմվածքներ՝ «Մթնաձոր», «Միրհավ», «Հլումբաթի ձորը» և այլն):

Հին գյուղի պատկերացումը Բակունցի պատմվածքներում. «Մթնաձոր»-ում արտահայտված մանր բուրժուական տրամադրությունները: Բակունցի պատմվածքների ուժեղ լիրիկականությունը, վորը չերբեմն նրանց մոտեցնում է արձակ բանաստեղծության («Միրհավ»):

6. Վ. Թորոսյան. — (1894). «Լեվոնը», «Պրոլետարական համերաշխություն» (հատվածներ «Բագու» վեպի 1-ին և 2-րդ հատորից):

Բագվի պրոլետարիատի հերոսական պայքարը ցարիզմի և բուրժուազիայի դեմ՝ 1905 թվի հեղափոխության և ռեակցիայի տարիներին:

Բանվորական գործադուլներ, ցույցեր, ընդհատակյա աշխատանքների նկարագրերը վեպում. Լեոնը վորպես ընդհատակյա աշխատող հեղափոխականի տիպ:

7. Ն. Զարյան. — «Ռուշանի քարափը» (կրճատ):

Գյուղի սոցիալիստական վերակառուցումը «Ռուշանի քարափը» պոեմում. վերակառուցման հետևանքով գյուղի ել ավելի նրված դասակարգային պայքարի ցուցադրումը. կուլակների և նրանց գործակալ գյուղխորհրդի նախագահ Սողոյի կոլխոզ շարժման դեմ պայքարելու ձևերը (փաստաթուղթյուն, կուլակային ագիտացիա գյուղաց. մեջ, միջակ և չքավոր գյուղացիության կաշառելը և իր ազդեցության տակ գցելը և այլն):

«Ռուշանի քարափը» վորպես եպիկական պոեմ. հեղինակի՝ Թումանյանից կրած ազդեցությունը:

8. Մ Արմեն. — (1906). «Հին Յերևանը» (հատված «Յերևան» վեպից): Ֆեոդալական-սարգարական հին Յերևանի անհետացման նկարագրերը. նկարագրության գեղեցկությունը և հուզականությունը:

9. Վ. Նաբեց. — «Լոռու ձորը»:

Սոցիալիստական շինարարության արտացոլումը պոեմի մեջ: Լոռու ձորն ըստ Թումանյանի և ըստ Նորենցի պատկերացման: Լիրիկական և եպիկական տարրերը պոեմի մեջ:

Խորհրդային յեղբայրական ժողովուրդների պրոլետարական գրականություն

1. Ն. Զամյեսեյի—«Գործարանում»:
2. Կ. Լորդկիպանիձե—«Նոր գյուղացիներ»:
3. Դ. Զաբալի—«Մեկիլ» (հատվածներ):
4. Հ. Սաղրիս—«Անիֆները գրոհը»:
5. Մ. Գորկի. — «Բաղեչի չերգը», «Մրկահավի չերգը»:

Կարճ պատմական կենսագրական անդեկություններ Գորկու մասին: Իժի (վախկոտ մեղանամականություն) և բաղեչի (ազատ, հերոսական և անձնագոհ ձգտումի) հակադրությունը: «Մրկահավի չերգը» վորպես Գորկու քաղաքական-իրեական աճման և 1905 թվի նախորդակի պրոլետարական գրականության վոճի դարգացման հետևյալ աստիճան: «Մրկահավ»-ի հեղափոխական նշանակությունը: Գորկու այս արձակ բանաստեղծությունների պոետիկական առանձնահատկությունները՝ պաթոս, պատկերների ալեգորիա, խոսքի ռիթմիկություն, լեզվի բարձր հուզականություն, հակադրություններ (իժ-բաղե, մրկահավ-ճայ), հեղափոխական ուժանտիկա:

5. Մ. Շոլխով. «Հերկած խոպան» (հատվածներ):

Կոլեկտիվացման համար մղվող պայքարի հերոսական վորպես Շոլխովի այս վեպի հիմնական թեման: Նոր կյանքի կառուցումը գյուղում. այդ կառուցման դժվարությունների և նրանց հաղթանարման ցուցադրումը: Բնության տեսարանների գեղեցիկ նկարագրությունները վեպում:

Արևմտալեռնայական ժամանակակից հեղափոխական գրականություն

Բեկլա Իլլե. — «Տիստան բոցերի մեջ» (հատվածներ):

Իլլեը վորպես հունգարական պրոլետարական գրող: Հունգարական պրոլետարական հեղափոխության պատկերացումը վեպի մեջ: Ընդհատակյա աշխատանքների, տարբեր կուսակցությունների պայքարի լաչն և բաղձալողմանի ընդգրկումը վեպի մեջ: Իլլեի ստեղծած հեղափոխական բանվորների տիպերը:

Արևադարձային ընթերցանության գրքերի ցուցակ

ՀԻՆԳԵՐՈՐԳ ԽՈՒՄԲ

1. Հ. Հակոբյան — «Բանաստեղծություններ»:
2. Մտ. Զորյան — «Հերոս կոմունարը», «Գրադարանի աղջիկը»:
3. Մ. Դարբինյան — «Ջաղացպան Անտոնը»:
4. Բակունց — «Սպիտակ ձին»:
5. Ն. Զարյան — «Ռուշանի քարափը»:
